Սովետական ժամանակներում Զանգեզուրի հին բնակավայրերի կողքին առաջացել են նորերը՝ հարմարեցրած նոր տնտեսական պայմաններին։ Այսպես՝ Եռաբլուրի (Ուչթափալարի) սարահարթի վրա նոր Շնեհերը՝ Շինուհայրը, Հինի կողքին, Նորավանը՝ Սիսավանի—Սիսիանի կողքին, Աճանանի գետախառնուրդի մոտ՝ Սյունիքը։ Զանգեզուրումն էլ, ինչպես, օրինակ, նաև Լոռում, փոխվում է գյուղերի պատկերը, մանավանդ կոլտնտեսային շինարարության հետևանքով։ Հեռվից աչքի է զարնում ոչ թե եկեղեցին, այլ կոլտնտեսային գոմն ու պահեստը, կաթնատնտեսական ֆերման, գյուղի դրասենյակը, դրպրոցական շենքն ու ակումբը, երբեմն և կինոսրահը կամ գյուղական թատրոնը։ Նոր շենքերը կառուցվում են ավելի ազատ ու արձակ տեղանքների վրա՝ պլանավորման ենթարկված։ Աղբյուրներից ջուրը հասցվում է ավելի դյուրին մերձենալի կետերին։ Էլեկտրական լույսն ու ռադիոն մտնում է նաև քրաատակը։ Ճանապարհային շինարարությունը բաց է արել հեռավոր անկյուններն ավտոների երթևեկության համար։ Փոխվում է իր հիմունքներից ամբողջ կենցաղը, դրա հետ նաև թաղերի դասավորությունը գյուղում, շենքերի ճարտարապետությունն ու գյուղի ամբողջ դեմքը։

***

Ոչ միայն Խնձորեսկում, այլև հին գյուղերում, ինչպես Հին Գորիս գյուղն է, Տեղը, Տաթևը, Քարահունջը, թաղերը կրում են մեծ մասամբ տոհմական անուններ՝ վկայություն այն բանի, որ բաժանվող ազգականներն աշխատում էին իրենց նոր բնակարանները հիմնել հայրական օջախից ոչ հեռու և մշտական կապ պահպանել նրա հետ։ Թաղերի բնակիչների կազմի այդ դասավորությունը, գրեթե, ամենևին չի նկատվում վերաբնակված ընտանիքների շենացրած գյուղերում։ Տեղափոխված լինելով առանձին ընտանիքներով և ոչ թե տոհմական կապերով իրար հետ շաղկապված խմբերով, նրանք նոր հայրենիքում կառուցել են բնակարաններ՝ առանց աչքի առաջ ունենալու արյունակցական մերձավորությունը։ Այդտեղ ավելի աչքի է ընկնում այլ տիպի թաղական խմբավորում— ըստ սկզբնական հայրենիքի, այն է՝ միևնույն գյուղում իրար կողքի մի թաղում սարքվել են միևնույն վայրից տեղափոխվածները։ Մինչև այսօր էլ այդ նոր գյուղերի առանձին թաղերում նկատվում են բարբառային տարբերություններ։

Վերջին քսանամյակի ժամանակաշրջանում կառուցվող տներն արդեն բոլորովին հաշվի չեն առնում արյունակցական հարազատությունը և ընտրում են իրենց համար տեղանք ազատորեն, հաճախ հին գյուղերից դուրս՝ պապական օջախից շատ հեռու, օրինակ՝ Վաչագանում, Բարաբաթումում, Նոր Գորիսում։

Ռուսական տիրապետության հաստատվելուց հետո նոր տնտեսական-հասարակական պայմանների մեջ ծայր առած պրոցեսն է, որ սկզբում շատ դանդաղ, իսկ XIX դ. վերջին քառորդից ավելի և ավելի արագացող տեմպերով ձևափոխելով կենցաղը՝ արդեն հեղափոխության նախօրյակին ակնբախ կերպով իր կնիքն էր դրած գավառի բնակավայրերի բնույթի և մասամբ դասավորության վրա, ինչպես նաև բնակավայրերի ներսում տների խմբավորման, թաղերի վրա։ Խանական և մելիքական Զանգեզուրն անցել էր խորին անցյալը։ Զանգեզուրումն էլ կատարվել էր կապիտալիստական կարգերի սկզբնական ձևավորման նույն պրոցեսը, որը տեղի էր ունենում Անդրկովկասի բոլոր գա-